ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/23» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 01 հուլիսի 2019թ.

Ժամը 15:00

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Արմեն Խաչատրյան

Քարտուղար՝ Նելլի Աբովյան

Գնահատող անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան,Կարապետ Քարտաշյան

Բացող անդամներ՝ Արեգ Ափոյան, Լյուբով Մարկոսյան

1. **«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/23» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և ընթացակարգը ժամանակավորապես կասեցնելու մասին**

1.1 Հայտ ներկայացնելու մասին՝ 24.06.2019թ. գնման ընթացակարգ է հրապարակվել www.armeps.am կայքում, ինչպես նաև հրավերը հրապարակվել է www. gnumner.am պաշտոնական կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը պետք է բացվեին են 2019 թվականի հուլիսի 1-ին, Ժամը՝ 11:00-ին www.armeps.am կայքի միջոցով, սակայն վերջնաժամկետը լրանալուց հետո, գնման ընթացակարգի հանձնաժողովի բացող անդամներին, ARMEPS էլեկտրոնային համակարգի կողմից, հայտերի բացման առաջադրանքը բացակայում էր: Գնահատող հանձնաժողովը որոշում կայացրեց խնդրի մասին բանավոր՝ հեռախոսազանգի միջոցով, տեղեկացնել ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան աշխատակցին, որից հետո գնման ընթացակարգի հանձնաժողովի բացող անդամներին համակարգի կողմից եկավ հայտերի բացման առաջադրանք, սակայն ARMEPS էլեկտրոնային համակարգը մասնակիցների հայտերը բացելու հնարավորություն չընձեռեց և տվեց հետևյալ գրառումը՝ «Դուք այս գործողության համար բավարար իրավունքներ չունեք»: Հանձնաժողովը որոշեց գրությամբ դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ակնկալելով վերոնշյալ հարցի լուծումը ստանալ:

6. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/23» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում կայացրեց կասեցնել ընթացակարգը և հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից խնդիրը լուծելու օրվա ընթացքում, ՔԿ ծառայության մասնաշենքում, որը գտնվում է Արշակունյաց 63 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի.

Նախագահ՝ ---------- Ա. Խաչատրյան

Քարտուղար՝ ---------- Ն. Աբովյան

Գնահատող անդամներ՝

1. ---------- Կ.Քարտաշյան

2. ---------- Հ. Հովհաննիսյան

Բացող անդամներ՝

1. ---------- Լ.Մարկոսյան

2. ---------- Ա. Ափոյան